

վա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը:

ՀՀ հարկային օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին համապատասխան՝ շրջանառության հարկ վճարողը դադարում է այդպիսին համարվելուց, եթե ընթացիկ հարկային տարում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 58.35 միլիոն դրամը՝ գերազանցելու պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը:

ՀՀ հարկային օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Օրենսգրքի 59-րդ և 254-րդ հոդվածներով սահմանված՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը, ինչպես նաև Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 2018 թվականի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության ԱԱՀ-ի շեմը սահմանվում է 115 միլիոն դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում ենք, որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված այլ պայմաններին բավարարող հարկ վճարողը 2019թ.-ի հունվարի 1-ից կարող է համարվել շրջանառության հարկ վճարող, եթե նախորդ տարվա (2018 թվականի) ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցում 115 միլիոն դրամը և 2019թ. ընթացքում կարող է շարունակել համարվել շրջանառության հարկ վճարող, եթե ընթացիկ հարկային տարում (2019թ.) գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը:

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ